



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ Մ ԱՁՆՈՐԴԱՆԻՍ Մ ԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

**ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ**

**11 ՓԵՏՐՈՒՄ 2024**

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (58.1-14)

**Ա**յսպէս կ'ըսէ Տէրը.-  
«Ուժգին եւ անկաշկանդ պոռա՛, փողի նման ձայնդ բարձրացուր եւ իմ ժողովուրդիս պատմէ իր մեղքերը. Յակոբի սերունդին պատմէ իր անօրէնութիւնները: Ամէն օր զիս կը փնտռեն, կ'ուզեն իմ ճանապարհներս ճանչնալ. կարծես արդարութիւն գործած ժողովուրդ մը ըլլային, կարծես իրենց Աստուծոյն պատուիրաններէն երբեք դուրս ելած չըլլային: Եւ հիմա եկեր արդարութիւն եւ իրաւունք կը փնտռեն քովս, եւ կ'ուզեն Աստուծոյ մօտենալ: Կը հարցնեն.- "Ծոմ բռնեցինք, ինչո՞ւ նկատի չառիր. մենք մեզ նեղեցինք, ինչո՞ւ չլսեցիր մեզ": Որովհետեւ,- կ'ըսէ Տէրը,- ծոմ բռնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ընէք դարձեալ. ձեր աշխատաւորները կը հարստահարէք, ձեր հակառակութիւններն ու կռիւնները կը շարունակէք եւ խեղճերն ու աղքատները կը տանջէք: Այսպիսի ծոմապահութիւն պէտք չէ՛ ինծի. այսպիսով ձեր ձայնը ինծի չի՛ հասնիր: Միթէ այսպիսի՞ ծոմ ուզեցի. պահանջեցի՞ որ մարդս ինքզինքը չարչրկէ, կամ՝ գլուխը խոնարհեցնէ, ինչպէս եղէգը հովին դիմաց, կամ՝ քուրճի եւ մոխրի վրայ պառկի: Ա՞յս է քու ծոմապահութիւն

կոչածդ եւ Տիրոջ համար ընդունելի ծոմապահութեան օրը: Ո՛չ, - կ'ըսէ Տէրը, - ծոմապահութիւնը ա՛յն ատեն միայն իմ ուզածիս պէս կ'ըլլայ, երբ դադրիս անիրաւութիւն գործելէ, դադրիս վաճառքի մէջ խարդախութիւն ընելէ, ազատ թողուս հարստահարուածները եւ անոնց պարտքի անիրաւ մուրհակները պատռես. երբ հացդ անօթիին հետ բաժնես. անտուն աղքատները տունդ ընդունիս, զգեստ տաս անոր որ կը տեսնես թէ մերկ է, եւ ընտանիքդ ու զաւակդ չգրկես: Այն ատեն քու լոյսդ արշալոյսի պէս պիտի բացուի եւ դուն շուտով պիտի բժշկուիս. արդարութիւնդ քեզ պիտի առաջնորդէ եւ Աստուծոյ փառքը ամէն կողմէ քեզ պիտի պաշտպանէ: Այն ատեն երբ աղօթես՝ Աստուած պիտի լսէ քեզ. հազիւ բերանդ բանաս՝ պիտի հասնի քեզի: Եթէ դադրիս տկարները հարստահարելէ, ուրիշներուն սպառնալէ եւ անոնց մասին զրպարտութիւն ընելէ, եւ փոխարէնը յօժար սիրտով հացդ անօթիին տաս ու կարօտեալները կշտացնես, այն ատեն նոյնիսկ եթէ խաւար ըլլաս՝ պիտի լուսաւորուիս, մթութիւնդ կէսօրուան լոյսի պիտի փոխուի. Աստուած ինք պիտի առաջնորդէ քեզ միշտ, պիտի բաւարարէ բոլոր ցանկութիւններդ, պիտի զօրացնէ ոսկորներդ, եւ դուն ջրաբբի պարտէզ ու մշտահոս աղբիւր պիտի դառնաս: Զաւակներդ դարձեալ պիտի շի-նեն քու քաղաքներդ որոնք երկար ատեն աւերակ մնացած էին. անոնց հիմերը պիտի վերականգնեն անսասանելի, եւ սերունդէ սերունդ

պիտի բնակին. ու պիտի ճանչցուիս որպէս փլատակները նորոգող եւ աւերուած ճամբաները վերաշինող ժողովուրդ: Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԷՆ  
(13.11-14.23)**

**Ս**իրոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակն է որ քունէն արթնանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի՛ մօտ է մեզի քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի գէնքերը առնենք՝ ապրելու համար այնպէս ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նմանեցէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ կուռքերու գոհուած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող չարհամարհէ՛ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուծո զայն ընդունել է: Ո՞վ ես դուն որ Աստուծոյ ծառան կը դատես:

Տէրը ի՛նք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին թէ զԱստուծո զաշտելու համար այսինչ օրը աւելի յարմար է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտուողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չդնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ կուռքերու գոհուած միս ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ'ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ'ապրինք՝ Տիրոջ համար կ'ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք. որ կը նշանակէ թէ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի մեր Տէրը ըլլայ թէ՛ կեանքի եւ թէ՛ մահուան մէջ հաւասարպէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Ես ինձմով կ երդնում, - կ'ըսէ Տէրը, - որ ամէն ծուկ պիտի խոնարհի առջեւ եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ե՛ս եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրինք զիրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն զայթակողութեան եւ մեղանշումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ'ըլլայ ա՛յն մարդուն համար, որ զայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ

եղբօրդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չե՛ս ըլլար երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս մեռաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանդ հայհոյութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի կ'ըլլայ եւ մարդոց գովելի:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան մաքուր է ինքնին. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումդ քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛ անոր որ ինքզինքը դատապարտութեան չ'ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ'ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(6.1-21)**

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.՝  
«Ձգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պար-տաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

«Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝

փող ու թմբուկով մի՛ ըներ, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ը-նեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

«Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէք.՝

«Հայր մեր երկնաւոր, սրբաբանով՝ անունդ. թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

«Եթէ մարդոց ներէք իրենց յանցանք-

ները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

«Երբ ծոմ պահէք, տրտում երես մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն: Վստահ եղէք, միայն այդ է իրենց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ ծոմ կը պահես, օձէ՛ գլուխդ եւ լուս՛ երեսդ, որպէսզի մարդիկ չզիտնան թէ ծոմ կը պահես. եւ Աստուած որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Ձեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կը կրծեն ու կը փտեցնեն եւ կամ գողերը տանդ պատը քանդելով ներս կը մտնեն ու կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը երկինքի մէջ դիզեցէք, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար կրծել եւ փտեցնել զայն եւ ոչ ալ գողերը կրնան տանդ պատը քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր հարստութիւնը ուր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

## ՏՆՕՐՀՆԷՔ

ՏՆՕՐՀՆԷՔ ՓԱՓԱՔՈՒ  
ՈՆՏԱՆԻՔԱՆՈՐ,

ԹՈՂ ԲԱՐԵՀԱՃԻՆ ԴԻՄԷԼ

Տ. ԳԱՆԻԿ ԱՒ. ՔՀԱ. ԳՈՅՈՒՆԵԱՆԻ,  
ՀԵՌԱՁԱՅԱԵԼՈՎ՝ 514 909-5203 ԹԻՒՆ:

## ԱՅԺԵԼԵՅՒՔ

ԵԿԵՂԵՑԻՅԱ

ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՈ

ԵՒ

ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ

յԱՅՏԵՑԷՔ (like).

[www.facebook.com/Sourp](http://www.facebook.com/Sourp)

[HagopChurchMontreal](http://HagopChurchMontreal)

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՄԵԾ ՊԱՀՔ 2024

ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ՉՈՐԵՔԱՔԹԻ, 14 ՓԵՏՐՈՒՐ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՐ 7.00-8.00:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԿՐ ԱՏՏՈՒՅԷ  
ՀՈԳԸ. Տ. ՅԱԿՈՒ ՎՐԴ. ԵԱԳՈՒՊԵԱՆ

## ԱՅԺԵԼԵՅՒՔ

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅԱ ԿԱՅԷՁՈՒ՝

[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՐ

ԱՆՏՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԵԼՈՎ

ԵԿԵՂԵՑԻՅԱ ԳՐԱՏԵՆԵԱԿ: